

Ալբերտ Ա. Ստեփանյան
Պատմագիտության դոկտոր

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊՈՆՏԻԿԱՆ ԵՎ ԱՐՇԵՍՏԸ

Մարկ Բլոկի «Պատմության պաշտպանական կամ պատմաբանի արհեստը» երկի հայերեն թարգմանության առիթով*

Բանալի բառեր – «Տարեգրական շարժում», մարդաբանական պատմություն, համընդգրկուն պատմություն, ժամանակի կարճ և երկար տևողություններ, քաղաքակրթություն, պատմության օրինականացում, պատմության հասկացում, պատմության պոետիկան, պատմագետի արհեստը:

Մուտք

Կատարվել է լրջմիտ աշխատանք այս կոթողային գործը¹ արդի հայերենի եզրաբանությամբ ներկայացնելու, մեկնաբանելու և իմաստավորելու ուղղությամբ: Եվ հաջողությունն աներկբա է: Ապագային թողնելով տեքստի լեզվաիմաստային իսկության քննությունը՝ արդ խնդիր ունենք միայն ներկայացնելու «Պաշտպանականի» տեղը և դերը պատմագիտության կերպավորությունների համաձիբում: Զի համոզված ենք, որ հենց դա է վերջինիս տեղայնացման առաջին և անհրաժեշտ պայմանը մի հասարակությունում, որի պատկերացումները գիտակարգի արևմտյան ըմբռնումների մասին բավական մոտավոր են:

1. Պատմական հետնախորքը

Չնայած իր հազարամյա ավանդույթներին՝ պատմագիտությունը նոր գիտակարգ է: Ձևավորվել է 19-րդ դարի առաջին կեսին՝ շնորհիվ մտավորական նոր փաղանգի ստեղծագործ ջանքերի՝ Լեոպոլդ ֆոն Ռանկե, Իոհան Գուստավ Դրոյզեն, Ժյուլ Միշլե, Ֆրանսուա Գիգո և այլք: Հույժ տարբեր էին նրանց հետազոտական մոտեցումներն ու արդյունքները, սակայն մի բան աներկբա էր՝ նրանց գրչի ներքո անցյալի հետազոտությունը ձեռք էր բերում ինքնահայեցողության (ավտոռեֆլեքսիա) ունակություն: Հեռանկարում

*Հոդվածն ընդունվել է տպագրության 26. 01.2019:
1 Տե՛ս Մ. Բլոկ, Պատմության պաշտպանական կամ պատմաբանի արհեստը, ֆրանսերենից թարգմանեց՝ Շուշան Մակարյան, հոդված և ծանոթագրություններ՝ Սմբատ Հովհաննիսյան, Եր., «Ս. Խաչենց, Փրինթինգո, Աստարես», 2018:

ԺԱ (ԺԷ) ցարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019
վճմ համահայկական հանդես

հենց դա էլ նպաստեց, որպեսզի պատմությունը բանաձևվի իբրև արդիական գիտակարգ: Ընդամին, պատմության ինքնահայեցողությունը տարածվում էր նրա սկզբնաղբյուրների, հետազոտական մեթոդների, իմացաբանական հնարավորությունների, ստացված արդյունքների օրինականության և հասարակական արժեքանության վրա:

19-րդ դարի երկրորդ կեսին այս խթանն էապես կերպափոխվեց: Խնդիր դրվեց որոշարկելու պատմագիտության տեղը ի շարս այլ գիտակարգերի՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, լեզվաբանություն, իմաստասիրություն և այլն: Մտավոր արտադրության բոլոր հարթակներում տիրական էր դրապաշտությունը (պոզիտիվիզմ)՝ համոզված «[...] թե չի կարող լինել ճշմարիտ գիտություն, որը չհանգեցնի միանգամից անհերքելի ապացույցների և հրամայաբար ընդհանրական օրենքների տեսքով ձևակերպված ստուգությունների»²: Այլոքեն՝ վերացական հոգնակիականությունը ու դրանից ածանցվող «ինչու»-ն հռչակվում էին գիտականության միակ չափորոշիչներ:

Այս համատեքստում պատմությունը լուսանցքայնացավ. համալսարանական հիմնավոր կրթությունն ստացած հետազոտողների նոր սերնդի համար ուղեցույց դարձավ արիստոտելյան վաղնջական բանաձևը «Պատմության նպատակն է շարագրել լոկ այն, ինչ եղել է»³: Եվ ոչինչ ավելի, քանզի պատմությունը եզականի տիրույթ է՝ կոնկրետ դեպքեր, իրադարձություններ, դեմքեր: Այն կառուցված է «ինչպես»-ի իմացաբանությամբ և գեղագիտությամբ:

Նման ըմբռնումներն ի մի բերեցին Շարլ-Վիկտոր Լանգլուան և Շարլ Մենյոբոսը իրենց հանրահայտ «Ներածություն պատմության հետազոտության» ծիրում: Այն շուտով վերածվեց դասագրքի և ուսուցանում էր՝ ինչպես կարելի է «վերականգնել պատմական ճշմարիտ անցյալը» սկզբնաղբյուրների պատշաճ ընտրության և դասակարգման, վերլուծության և համադրության ճանապարհով: Սակայն, հրնթացս ժամանակի ձևավորվեց հումանիտար մի նոր գիտակարգ, որը եկավ լրացնելու այս «բացը»՝ ընկերաբանությունը (սոցիոլոգիա)՝ Կարլ Մարքս, Մաքս Վեբեր, Անրի Բերգսոն, Էմիլ Դյուկեյմ: Այն բերեց համակեցական իրողությունների ձգբրիտ չափում, զարգացման օրինաչափություններ, արդյունքների կանխատեսելիություն: Եվ այս ամենը կատարվեց ի հաշիվ «կենդանի պատմության»:

Ի շահ համակեցական տիպաբանությունների և ալգորիթմերի՝ անտեսվեց պատմության կարևորագույն չափույթը՝ կոնկրետ ժամանակն իր միտումներով, տարասեռություններով և (անգամ) պատահականություններով: Այն փոխարինվեց միագիծ պատճառահետևանքային առնչությունների շարքերով, որոնց կիզակետն այլևս համակեցական խմբերն ու հաստատություններն էին իրենց կայուն մշակութային, կրոնական, գաղափարախոսական համալիրներով ու տեքստերով: Մերօրյա եզրաբանությամբ՝ հետազոտական օրինակարգությունը (նոմոթետիզմ) բացարձակ գերակայություն

2 Մ. Բյոկ, անդ. էջ 58:

3 **Aristot.**, Poet. IX, 1451b, 5 – 7. Cf. **Carbi S.**, Poetry is More Philosophical than History: Aristotle on Mimesis and Form, Review of Metaphysics, 64/1, pp. 309 – 311. Նշենք, որ նոր ժամանակներում այդ բանաձևը ներկայացվում էր Լ. Ֆոն Ռանկեի սահմանմամբ՝ «Ինչպես իրականում եղել է (Wie es eigentlich gewesen ist)». **Carr E. H.**, 1987, What is history, 2d ed., London, Penguin, p.9.

ստացավ մասնականության (իդիոգրաֆիզմ) նկատմամբ⁴:

Սակայն 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի մտահոգևոր կերպափոխություններն ավելի ընդլայն էին ու հիմնարար: Դրանք կոչված էին տարակերպելու նախորդ աշխարհատեսական համալիրի հիմնականում բաղադրիչները՝ սկսյալ ժամանակից ու տարածությունից, պատճառականությունից ու կառույցից, էներգիայից ու շարակարգությունից: Թռուցիկ հայացք միայն: Անրի Պուանկարեի և Ալբերթ Այնշթայնի ջանքերով բանաձևվեց ժամանակի և տարածության հարաբերականությունը, ներատոմական հետազոտությունները խաթարեցին նյութական աշխարհի սահմանների անբեկանելիությունը, քվանտային ֆիզիկան բերեց նյութի և էներգիայի փոխընդդիմության հղացքը: Ավելին, ձևակերպվեց քվանտային տրամաբանությունը, որը սահմանեց ճանաչումն իբրև հարընթաց մոտեցման հոլովույթ, երբ կարևորվում են հանգրվանային արդյունքները, իսկ վերջնականը մնում է տարտամ և հեռավոր: Եվ հասկացում-ըմբռնումը (ի տարբերություն գիտելիքի) սկսեց ընկալվել իբրև գիտության հիմնականատակ, որի ծիրում առանձնահատուկ դերակատարություն ունեն հետազոտողի անհատականությունը և մտահորիզոնը:

Հումանիտար մտքի կերպափոխություններն իրենց երկար սպասել չտվին: Ի լրումն ընկերաբանության, ի հայտ եկան կառուցվածքային լեզվաբանությունը և նշանագիտությունը, հոգեբանությունը և ազգաբանությունը, ընկերային աշխարհագրությունը և քաղաքակրթագիտությունը, աշխարհաքաղաքականությունը և քաղաքագիտությունը: Լոկ պատմագիտությունն էր մնացել «մարդուն վերաբերվող գիտությունների խղճուկ մի անկյունում»⁵: Եվ ոմանք սկսեցին անգամ մտածել, որ այն կոչված է սուսկ սպասարկելու հիշյալ գիտակարգերին:

Քչերն էին ընդդիմանում ձևավորված իրավիճակին: Դրանց թվում էր նշանավոր պատմագետ և իմաստասեր Անրի Բերրը, ով ուներ ճգնաժամի հաղթահարման իր դեղատոմսը: Գտնում էր, որ պատմագիտության տիրույթ պետք է ներբերել այլ գիտակարգերի ձեռքբերումները՝ հարիր նրա բարեփոխման պահանջներին: Ասվածի մարմնացումը դարձավ նրա «Պատմական համադրության հանդեսը»: Աստ համախմբվեց մտավորական մի կորիզ, որի ջանքերով էլ հետագայում հնարավոր դարձավ հետազոտական աննախադեպ ձեռնարկ՝ «Մարդկության տարաշրջումը (L'Évolution de l'humanité)» վերտառությամբ: Առայսօր փոխվել են հետազոտողների մի քանի սերունդներ, և հրատարակվել դրա 100 հատոր՝ մարդկային գործունեության տարբեր միջավայրերի և դարաշրջանների վերաբերյալ:

2. Նոր հարացույցի հիմնագծերը

Սակայն, Ա. Բերրի համադրությունը շատ դեպքերում սխեմատիկ էր և հատվածական, ուստի լիարյուն պատմություն լինել չէր կարող: Այս դժվարին հիմնախնդրի լուծումը վերապահված էր պատմագետների հաջորդ սերնդին: Այն սկզբնավորվեց Ֆրանսիայում 1920-ականների վերջին՝ ակա-

4 Տե՛ս **Thomae H.**, 1999 The Nomothetic-Ideographic Issue. Some roots and trends, International Journal of Group Tension, 28/1, pp. 188 - 193:

5 Մ. Բոլկ, անդ., էջ 64:

դեմիական պատմական ըմբռնումների ծիրից անդին: Հանդիպեցին երկու հասուն պատմագետ՝ Մարկ Բլոկը և Լյուսյեն Ֆերը և նախնական բուռն քննարկումներից հետո որոշեցին հիմնել իրենց հետազոտական հանդեսը՝ մշակելու պատմության նոր տեսլականի հիմքերը: Այդպիսին դարձավ «Տարեգրությունը տնտեսական և ընկերային պատմության» («Annales d'histoire économique et sociale»)–ը: Առաջին համարը լույս տեսավ 1929 թվականին: Հանդեսին սկսեցին իրենց մասը բերել նոր մտածողության հետազոտողներ: Հընթացս ժամանակի նրանք կազմավորեցին պատմագիտական մի հզոր շարժում, որն առայսօր տվել է երեք-չորս սերունդ: Նրանք սկսեցին կոչվել «Տարեգրականներ», զի թեպետ իրենց տարբերություններին, ձկուն զարգացնում էին հիմնադիր հայրերի հետազոտական սկզբունքները և մոտեցումները: Պատմագիտության տեսաբաններից ոմանք Շարժումը բնութագրում են իբրև հեղափոխություն⁶:

Մենք չենք անդրադառնա այդ հեղափոխության ականավոր հեղինակներին և ձեռքբերումներին: Դրանք նուրբ դիտողականությամբ ու պատշաճ մասնագիտական ընդգրկմամբ ներկայացված են Ս. Հովհաննիսյանի հետազոտական ակնարկում՝ «Մարկ Բլոկը և աննալների դպրոցը. մարդաբանական և համադրական պատմության մեթոդաբանությունը»: Մեր խնդիրն է՝ համառոտ կանգ առնել հիմնադիր հայրերի «սխրանքի» վրա՝ բացահայտելով դրա խորքային բաղադրիչները, որպեսզի անհրաժեշտ հիմքեր ունենանք սևեռվելու «Պաշտպանականի» կառույցի և բովանդակության, եզրաբանության և ընդգրկուն հղացքի վրա:

Հույժ նկատելի է մի իրողություն. սկսելով իրենց գործը՝ հիմնադիր հայրերը ինչ–ինչ առումներով դեռ գտնվում էին նախորդ հեղինակությունների ազդեցության ներքո: Խոսքը նախևառաջ է. Դյուրկհայմի, Պ. Վիդալ դե Լաբլաշի և Ա. Բերրի մասին է: Ի մասնավորի՝ դա է վկայում հենց հանդեսի վերտառությունը. նրանք կրկին մեկնարկում էին հասարակական ընդլայն խմբերից և դասերից, տնտեսական և քաղաքական, մշակութային և կրոնական համալիրներից:

Սակայն հետագայում աստիճանաբար պարզորոշվեց նրանց հետազոտական դիմագիծը: Հիմնագաղափարը, որով նրանք սկսեցին առաջնորդվել, վերաբերվում էր նախևառաջ ընկերային մարդուն: Հարկավ, դա նորություն չէր. դրա տակ ընկերաբանները սովորաբար նկատի էին առնում հասարակությունը: Նրանց ընկալմամբ՝ մարդը մտավոր վերացարկում է՝ նույնքան վերացական հասարակական մարմինը ներկայացնելու համար: Հիմնադիր հայրերը, չժխտելով այս մոտեցումը, շեշտադրում էին նաև Ժ. Միշլեից և Ն. Դ. Ֆլուստել ղը Կուլանժից եկող գաղափարն առ այն, որ «[...] մարդը հասարակության մեջ և հասարակությունը ամենևին համարժեք հասկացություններ չեն»⁷: Այլոքեն՝ խնդիր էր դրվում համադրելու մարդու հակոտնյա երկու հղացքները և ձևավորելու հիբավի մարդաբանական պատմություն (histoire anthropologique):

Ավանդական միագիծ պատմագիտական ըմբռնումների ծիրում նման ծրագրի իրագործումն անհնար էր: Ելքը բազմաչափ պատմության հարա–

6 Stéu **Burke P.**, 1990, The French Historical Revolution. The Annales Scholl 1929 – 1989, Stanford, UP, pp. 21 – 30:
7 **Fustel de Coulanges N. D.**, Questions Historiques, Paris, Libraire Hachette, 1885, p. 83.

ցույցի մշակումն էր՝ զերծ հատվածականությունից և սևուսպիտակի արժեքանությունից: Դա նոր կամ համընդգրկուն պատմությունն էր (*histoire nouvelle ou complète*): Համընդգրկուն, քանզի այն բաղդատվում էր մի միջավայրի հետ, որով ներծծված են ընկերային մարդու նյութական կյանքը և հույզերը, մտակեցվածքը և արարքները⁸: Հուսկ եզրակացություն. համակեցությունն ամբողջություն է, որի ծիրում համաբերվում են նրա բնական և էթնիկ, կրոնական և մշակութային, ընկերային և քաղաքական, կոլեկտիվ և անհատական պաշարները: Հետագայում այս ամբողջությունը սկսեց սահմանվել իբրև քաղաքակրթություն (*la civilization*): Եվ տվյալ եզրույթը, որը նախկինում առավելաբար ընկերաբանական-մշակութային բովանդակություն ուներ, արդ ստացավ հստակ պատմագիտական ուրվագիծ:

Քաղաքակրթությունների պատմագիտական դիտանկյունը հարուցեց նրանց կառույցի և բովանդակության ավելի տարողունակ ընկալում: Ի մասնավորի՝ հետազոտողներն սկսեցին հատկանշել այն իրողությունը, որ քաղաքակրթությունները միմյանցից տարբերվում են վերոհիշյալ պաշարների տարբեր համակցություններով. պետականակենտրոն, տնտեսակենտրոն, մշակութակենտրոն, կրոնակենտրոն և այլն: Կամ էլ՝ դրանք կարող են այդպիսի երանգ ստանալ գրույթի միջավայրում՝ կախված հեղինակի հետազոտական ռազմավարությունից: Հիմնադիր հայրերի մենագրությունների թվարկումն իսկ ասվածի լավագույն վկայությունը կարող է լինել: Մարկ Բլոկ. «Իլ-դը-Ֆրանս. Փարիզի հարակա շրջանների մասին», «Հրաշագործ արքաներ», «Ֆրանսիայի ագրարային պատմության բնորոշ հատկորոշիչները», «Ավատատիրական հասարակություն», հատ. Ա, «Կախվածության կապերի ձևավորումը», հատ. Բ «Մարդկանց դասերը և կառավարումը»: Լյուսիեն Ֆեր. «Ֆրանս-Կոնտեի պատմությունը», «Մի ճակատագիր. Մարտին Լյութեր», «Քաղաքակրթություն. մի բառի և մի խումբ գաղափարների տարաշրջումը», «Ռուան. պատմության և տնտեսության հիմնախնդիրներ», «Անհավատության հիմնախնդիրը 16-րդ դարում. Ռարլեի կրոնը», «Մարտեր պատմության համար»⁹:

Հարկավ, համընդգրկուն պատմությունը պահանջում էր իր հիմնակազմիկ չափույթների վերանայում: Խոսքն առաջին հերթին ժամանակի և պատճառականության մասին էր: Եվ հիմնադիր հայրերն այս տիրույթներում նույնպես լուրջ քայլեր կատարեցին՝ նոր պատկերացումներ պատվաստելով պատմագիտությանը:

Ժամանակն ավանդական պատմագիտական տեքստերում կրկնում էր դասական մեխանիկայի իր բնորոշին՝ բանաձևված դեռ Ռ. Դեկարտի և Ի. Նյուտոնի կողմից: Այլորեն՝ միագիծ-միասնական էր և վերացարկված իր ներքին բովանդակությունից: Ցուցանում էր Երկիր մոլորակի տիեզերական առնչությունները, բայց ոչ մարդկային-համակեցական կերպափոխությունները: Մինչդեռ Մ. Բլոկի համոզմամբ՝ «Պատմության ժամանակը պլազմա է, որի մեջ լողում են ֆենոմենները: Դա մի միջավայր է, որի համածիրում

8 Տե՛ս **Febvre L.**, , À nos lecteurs, à nos amis. Face au vent: manifeste des “Annales” Nouvelles. Annales. Histoire, Sciences Sociales, I, 1946, p. 2:

9 Տե՛ս **Հովհաննիսյան Ս.**, Անալների պատմագիտական դպրոցը. Լյուսիեն Ֆերի և Մարկ Բլոկի պատմության տեսությունը, «ՎԿԱ» համահայկական հանդես, 2011, N 2 (35), էջ 95 – 98:

վերջիններս ի գորու են հասկացվելու»¹⁰:

Այլոքեն՝ խնդիր էր դրվում համընդգրկուն պատմությունը հասկանալ համընդգրկուն-բովանդակային ժամանակի չափույթում: Հուսկ ծնունդ առավ մի նոր հղացք, համաձայն որի ընկերային մարդն ապրում է զուգահեռաբար ժամանակի մի քանի չափույթներում՝ սկսյալ կարճ ու թրթռուն-առտնին ժամանակից (*la courte durée*) մինչև հանդարտ ու ծավալուն երկար տևողությունների ժամանակը (*la longue durée*)¹¹: Տարեգրականների երկրորդ սերնդի ականավոր ներկայացուցիչ Ֆ. Բրոդելի համոզմամբ՝ ժամանակի չափույթները շատ անգամ ավելի են. «Չկա միասնական ընկերային ժամանակ՝ միասնական ու պարզ ընթացքով, այլ կա ընկերային ժամանակ հազար հապաղումներով»¹²: Դրանք անմիջական առնչություններ ունեն մարդու հարափոփոխ ընկերային դերակատարումների հետ: Զի համակեցական կյանքը խորքային իմաստով մոտ է թատերական ներկայացման:

Պատճառականության հիմնախնդիրը հույժ կարևորվեց հենց այս լույսի ներքո. հարկ էր ագուցել ժամանակի առանձին տիրույթները (և դրանց բովանդակած իրադարձության շարքերը)՝ բացառելով վերջիններիս փշուր-փշուր լինելու հնարավորությունը: Հանգույն ժամանակի՝ պատճառականությունը նույնպես ճանաչվեց բազմաչափ: Եվ նրա չափույթները նույնպես ներկայացվեցին ինչպես համաժամանակյա, այնպես տարժամանակյա հոլովույթների ծիրում: Դրանք նկատվում էին հույժ տարբեր ըստ իրենց բովանդակության, որակի և ռիթմի. ժամանակային հաջորդականություն (*séquence temporelle*), ծագումնաբանական հաջորդականություն (*séquence génétique*), տիպաբանական առնչություն (*relation typologique*) և համակարական առնչություն (*relation sympathique*)¹³: Համաձայն առաջադրվող հղացքի՝ դրանք երբեմն հատվում են, երբեմն զուգահեռվում, երբեմն էլ համաբերվում:

Ի մի բերելով ասվածը՝ կարելի է հաստատագրել. հիմնադիր հայրերն առաջադրեցին պատմության սկզբունքորեն մի նոր հարացույց՝ մարդակենտրոն, համընդգրկուն, քաղաքակրթական՝ կառուցված ըստ տարաչափ ժամանակի և պատճառականության սկզբունքների կիրարկման¹⁴:

3. «Պաշտպանականի» իմաստաբանությունը

Այդուհանդերձ, հայրերի համար հստակ էր, որ անհնար է մեկնաբանել և ըմբռնել անցյալի ու ներկայի նման բարդ պատկերը նախորդ հետազոտական գործիքակազմով: Հարկ էր ստեղծել նորը: Ահա այս անհրաժեշտությամբ է, որ Մ. Բլոկն իրագործեց իր հերթական (և ցավոք, վերջին) սխրանքը. մահվան հայացքի ներքո համաբերեց իր «Պաշտպանականը»:

Թեպետ անավարտ ու անմշակ «Պաշտպանականը» իմաստային միասնություն է՝ հստակ ձևակերպված եզրույթների շարակարություն, որն իր տրամաբանական զարգացմամբ պարառում է առաջադրված հիմնախնդրի

10 Մ. Բլոկ, անդ., էջ 71:

11 Տե՛ս Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., Ժամանակի կառույցը Ֆ. Բրոդելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կրթություն. գիտական և մեթոդական հանդես», 2005, N 1-2, էջ 35 - 36:

12 Braudel F., *Écrits sur l'histoire*, Paris, Flammarion, 1969, p. 62.

13 Տե՛ս Cf. Gaddis J., 2002, *The Landscape of History. How Historians Map the Past*, Oxford, UP, pp. 91 - 110:

14 Տե՛ս Հովհաննիսյան Ս., Լյուպեն Ֆերի կենդանի պատմություն տեսությունը, «Պատմության հարցեր» 2, Եր., «Ջանգակ», 2013, էջ 227 - 231:

կարևոր դիտանկյունները: Գրույթի նշանաբանությունը (սեմիոտիկա) և իմաստաբանությունը (սեմանտիկա) փոխլրացնում են միմյանց: Նրա սկիզբն ու ավարտը հանդիպում են ընթերցողի ուղիղ և հակառակ հեռանկարների ծիրում: Ասելիքը շարունակվում է գրքի սահմաններից անդին: Եվ պատահական չէ, որ այսօր էլ (ութսուն տարի անց) գիրքը պատմագետների սեղանին է իբրև տեսական ուղեցույց:

«Պաշտպանականի» իմաստային մեկնակետը երկու հիմնարար հղացքներ են՝ պատմական ճանաչումի օրինականությունը (*la légitimité*) և իսկությունը (*l'authenticité*):

Դրապաշտ պատմագետները, հարկավ, անդրադարձել էին դրանց՝ հիմնախնդրի մեջ տեսնելով նախևառաջ եղելույթի և սկզբնաղբյուրների համապատասխանության խնդրականը: Համոզված էին՝ դրանից է ածանցվում պատմական փաստը (*le fait historique*), որի բազմակիությունից էլ ծնվում է պատմական գրույթը (*le récit historique*): Մյուս կողմից՝ նրանց ընկալումներում գերակայում էր կիրառական կամ անմիջական օգտապաշտությունը: Հիշենք նրանց հանրահայտ բանաձևը. «Պատմությունը քաղաքականություն է շրջված առ անցյալը»:

Մ. Բյուկն այս հիմնախնդրի լուծումը տեղափոխում է այլ տիրույթ. «Պատմության օգտակարության խնդիրն իր նեղ օգտակար բառի «կիրառական» իմաստով չպետք է շփոթվի նրա օրինականության զուտ իմացական խնդրի հետ»¹⁵: Այսինքն՝ կա պատմության մի ըմբռնում, որը հաստատագրում է. «Մեր բանականությունն ի բնե ավելի հակված է հասկանալու, քան իմանալու»¹⁶: Իսկ հասկացումը (*la compréhension*), ըստ հեղինակի, ենթադրում է ճանաչողության ավելի բարձր մակարդակ, որի պարագային պատմագիտությունը մոտենում է արդի զարգացած գիտակարգերին: Գիտակարգեր, որոնք «[...] աներկբայելիս փոխարինել են անվերջ հնարավորով, ճշգրիտ չափելին՝ չափի հավերժ հարաբերականության հասկացությամբ»¹⁷: Հետագայում Ֆ. Բրոդելը, զարգացնելով այս մոտեցումը, պատմական հասկացումը պետք է կապեր ժամանակի երկար տևողության հետ և հայտագրեր, որ միայն այս դեպքում է հնարավոր պատմության խորքային ըմբռնումը¹⁸: Եվ դա էլ համարեր յուրաքանչյուր ճշմարիտ պատմագետի առաքելությունը:

Բոլոր դեպքերում, ակներև է մի իրողություն. պատմության իսկությունը նույնպես բազմաշերտ-համադրական հոլովույթ է, որը սկսվում է կոնկրետ իրադարձությունների ու փաստերի ամրագրումից և իր տրամաբանական հանգուցալուծմանը հասնում հասկացումի փորձառությամբ. «Պատմությունն ավելի լավ ճանաչելուն միտված ջանք է, հետևաբար և շարժման մեջ գտնվող մի բան»¹⁹: Նման ըմբռնումը միանգամայն հարիր է արևմտյան ըմբռնումներին՝ ձևավորված դեռևս դասական Հունաստանում: Եվ կողավորված է գիտակարգի հենց անվանման մեջ՝ *ἱστορία* – «հետազոտություն, հետաքննություն»: Այլորեն՝ եթե պատմությունը գրույթ է, ապա պատմա-

15 Մ. Բյուկ, անդ., էջ 54:

16 Մ. Բյուկ, անդ., էջ 53:

17 Մ. Բյուկ, անդ., էջ 61:

18 Տես Braudel, op. cit., pp. 78 – 79:

19 Մ. Բյուկ, անդ., էջ 56:

գիտությունը դրա հետազոտական տարակերպն է, որը նպատակ ունի բացահայտելու այն կարևորը, ինչն առերևույթ չէ ոչ ներկայի, ոչ էլ անցյալի տիրույթում: Հուսկ մի նոր եզրահանգում՝ այս գիտակարգին ներհատուկ են մեկնարկվեստի (հերմենևտիկա) ակներև գործառույթները²⁰:

Խորքային առումով «Պաշտպանականը» հենց այդ մասին է: Ի մասնավորի՝ ինչ ուղիներով է հնարավոր պատմության մեկնաբանությունն ու հասկացումը: Մ. Բլոկի խոսքերով՝ «[...] պատմագետն անխուսափելիորեն ստիպված պետք է լինի առանձնացնել մի մասնակի տեղամաս իր գործիքների համար, հետևաբար՝ կատարել ընտրություն, որն ակնհայտորեն կտարբերվի, ասենք, կենսաբանի ընտրությունից և կլինի զուտ պատմագետի ընտրություն»²¹: Ավելին, այդ ընտրությունը (le choix de l'historien) ունի նաև անհատական չափույթ, զի կախված է տվյալ կոնկրետ պատմագետի հետազոտական ճաշակից ու նախասիրություններից:

Դրանք ներկա են «Պաշտպանականի» գրեթե բոլոր էջերում՝ ուղենշելով վերջինիս իմաստային զարգացումը: Համաձայն հեղինակի նախնական հղացման՝ այն պետք է լիներ հնգատակտ: Սակայն պահպանված ձեռագիրը հնարավորություն է տալիս խոսելու սոսկ քառատակտության մասին: Դրանք կազմում են աշխատության չորս գլուխները. «Պատմություն, մարդիկ և ժամանակ», «Պատմական դիտարկում», «Քննադատություն», «Պատմական վերլուծություն»: Իր հերթին, գլուխներից յուրաքանչյուրն ունի իմաստային զարգացման իր տրամաբանությունը՝ ձևակերպված առանձին ենթագլուխների տեսքով:

Գլուխ առաջին՝ «Պատմագետի ընտրությունը», «Պատմությունը և մարդիկ», «Պատմական ժամանակը», «Ծագումի կուռքը», «Անցյալ և ներկա»: Իմաստային շարժը սկսվում է հետազոտող անհատի ինքնագիտակցումից և ընթանում դեպի մարդակենտրոն համակեցական միջավայրի հաստատագրում: Իսկ ապա՝ կարևորվում է ժամանակի չափույթն իր անընդհատության և փոփոխության հոլովույթում, զի հետազոտվող գիտակարգը «մարդկանց մասին է՝ ժամանակի մեջ»: Շարժի հաջորդ հանգրվանը նվիրված է սքոլաստիկ պատճառականության (ծագումի) ժխտմանը, որի գերակայությամբ՝ «[...] անցյալը մեծագույն եռանդով օգտագործվել է ոչ այնքան ներկան բացատրելու, որքան արդարացնելու կամ դատապարտելու համար»²²: Եվ վերջին հանգրվանը խնդիր ունի բացահայտելու ներկայի և անցյալի սերտ առնչությունները, երբ հաճախ դժվար է դրանք հստակորեն տարանջատել. «Դարաշրջանների համերաշխությունն այնքան զորեղ է, որ հասկացական աղերսները նրանց միջև հիրավի երկկողմանի են: Ներկան չհասկանալն անցյալի չիմացության անխուսափելի հետևանք է: Բայց թերևս նույնքան էլ ապարդյուն է անցյալը հասկանալու ամեն ջանք, եթե ներկայի մասին ոչինչ չգիտես»²³:

Գլուխ երկրորդ՝ «Պատմական դիտարկման գլխավոր հատկանիշերը», «Վկայություններ», «Վկայությունների փոխանցումը»: Մեկնակետային հաս-

20 Տե՛ս **Marwick A.**, նշվ. աշխ., էջ 28:

21 **Մ. Բլոկ**, անդ., էջ 66:

22 **Մ. Բլոկ**, անդ., էջ 76:

23 **Մ. Բլոկ**, անդ., էջ 89:

«գիտական» նախապաշարումների և բացարձակ բանականության: Որքան էլ տարբեր, դրանք միևնույն է «[...] մղում են ընթերցողների անպաշտպան զանգվածը դեպի կարծեցյալ պատմության կեղծ գոհարները, որն իր անլրջությունը, էժանագին գունագեղությունն ու քաղաքական կանխակալությունները փորձում է կոծկել անհամեստ ինքնավստահությամբ»²⁷:

Անցնելով ստի և սխալի բացառման ճանապարհով, բայցև չտրվելով հակաստի և հակասխալի գայթակղությունը՝ պատմագետը հույս ունի վերադառնալ իր աշխատանոց, «իր դագգահի մոտ»: Այս ձեռնարկի հաջողությունը պայմանավորված է նրա հետազոտական մեթոդի և հայեցողության մակարդակով. սկզբնաղբյուրների և դրանց շրջակա պատմական միջավայրերի համեմատություն, զուգադիպություն, համապատասխանություն, մյուս կողմից՝ տարբերություն, փաստական և տրամաբանական հակասություն: Ի հետևանս՝ պատմության դիմաց «[...] բացվում են շատ ավելի ընդարձակ հորիզոններ, և նա իրավունք ունի իր անուրանալի փառքերի շարքին դասելու այն, որ իր տեխնիկան մշակելով՝ մարդկանց համար նոր ուղի է բացել դեպի ճշմարիտը և հետևաբար արդարը»²⁸:

Գլուխ չորրորդ՝ «Դատել, թե՞ հասկանալ», «Մարդկային իրողությունների բազմազանությունից դեպի գիտակցության միասնականություն», «Անվանակարգ»: Նախ սկսենք այն փաստի արձանագրումից, որ պատմական ինքնահայեցողության արշալույսին դատելու (juger) և հասկանալու (comprendre) տարիմաստությունը գրեթե բացակայում էր: Հատկանշական է, որ հունարեն ἵστωρ եզրը նշանակում էր դատավոր, որն առկա փաստերի ու վկայությունների քննությամբ և հաշվի առնելով հանրային արժեկարգը՝ կայացնում էր «արդար և անաչառ» որոշում այս կամ այն կոնկրետ դեպքի կապակցությամբ²⁹: Հետագայում, սակայն, ձևական տրամաբանության զարգացմամբ երկու եզրերը տարանջատվեցին և անգամ հակադրվեցին միմյանց: Ընդսմին, դատելուն սկսվեց վերագրվել առավելաբար նկարագրական գործառույթ: Իզուր չէ, որ Արիստոտելի ըմբռնումներում պատմությանը վերագրվում էր նպատակ ներկայացնելու «սուկ այն, ինչ եղել է»:

Նման մոտեցումը, հարկավ, կրավորականություն էր հաղորդում պատմաբանի աշխատանքին, զի միայն դատելը բացառում է բացատրելու և (առավելաբար) հասկացումի հնարավորությունը: Ի հետևանս դրա՝ «[...] երկար ժամանակ պատմաբանը համարվել է հանդերձյալ աշխարհի դատավորի պես մի բան, որի պարտականությունը հանգուցյալ հերոսների և ներբողներ կամ նախատինք բաժանելն էր»³⁰:

Մինչդեռ հասկացումը ենթադրում է պատմանյութի նկատմամբ ներգործուն կեցվածք՝ միտված առ վերջինիս բանական կարգավորումը, զի հակառակ պարագային. «[...] կհանգենք ժամանակի, հետևաբար և ինքնին պատմության ժխտմանը»³¹: Աստ լիովին բացահայտվում է մի ընդլայն ճշմարտություն՝ պատմական գիտակցությունը (հետևաբար նաև պատումը

27 Մ. Բլոկ, անդ., էջ 134:

28 Մ. Բլոկ, անդ., էջ 185:

29 Տե՛ս Marwick A., The New Nature of History. Knowledge, Evidence, History, London, Palgrave, 2001, էջ 29 – 30:

30 Մ. Բլոկ, անդ., էջ 187:

31 Մ. Բլոկ, անդ., էջ 195:

և տեքստը) կարող է լինել միայն համադրական: Այն պետք է խնդիր ունենա ի մի բերելու ընկերային մարդու կյանքին վերաբերող գիտակարգերի հիմնարար արդյունքները: Այլոքն՝ անցում պետք է կատարվի եզականից դեպի ընդհանրականը. «Գիտությունը մասնատում է իրականությունը միայն մի նպատակով, որ ավելի լավ տնտղի՝ շնորհիվ խաչվող լույսերի խաղի, որոնց ճառագայթները շարունակ գուգակցվում ու փոխներթափանցում են»³²: Դա նույն համընդգրկուն պատմությունն է ձևակերպված իբրև իմաստաբանական հղացք:

Գիտարկվող իմաստային շարժի վերջին հանգրվանն անվանակարգն է (*la nomenclature*), որը նախատեսում է պատմատեսական նոր համալիրի կարևոր եզրույթների հերմենևտիկ վերլուծություն: Նպատակն է բացահայտել վերջիններիս նշանի (անուն) և իմաստի փոխհարաբերությունները՝ հընթացս ժամանակի տարակարգ տևողությունների:

Նշենք, որ այս մոտեցումն ունի խորագույն արմատներ՝ սկսյալ առապելամտածողությունից, որտեղ իրերի անվանակոչությունը դիտարկվում է իբրև նրանց արարման միջոց: Անտիկ իմաստասիրությունը՝ սոփեստներ, Սոկրատես, իսկ ապա Պղատոն, արդեն մեկնարկում էին անվան (*ὄνομα*) և իմաստի (*οὐσία*) անհամապատասխանությունից և գտնում, որ իմաստասիրական խոհի խնդիրն է «լրացնել» այդ բացը: Եվ պատահական չէ, որ բառարմատների (իրական կամ մտացածին) մեկնություններն այդչափ զգալի տեղ ունեն նրանց խոսույթներում: Այս հիմամբ ձևավորվեց մեկնարկվետաբան (*ἐρμηνευτική*), որին վիճակված էր ներագդելու մտավոր արտադրության գրեթե բոլոր միջավայրերի վրա³³:

Ժամանակ առ ժամանակ արդի գիտակարգերը կանգնում են սեփական անվանակարգերի ճշգրտման անխուսափելիության առաջ: Ասվածն առավել քան կարևոր է ճգնաժամանային իրավիճակներում, երբ անհրաժեշտություն է առաջանում հին իմաստային համալիրները համալրելու նոր բովանդակությամբ: Նոր պատմագիտության հիմնադիր հայրերը հենց այդպիսին էին համարում իրենց ժամանակաշրջանը:

Պատմության իմաստային վերարժևորման հիմնական միջոցը, ըստ Մ. Բլոկի, լեզուն է. «[...] լեզու՝ ունակ ճշգրտորեն եզրագծելու փաստերը, միաժամանակ պահելով անհրաժեշտ ձկունություն բացահայտումներին աստիճանաբար հարմարվելու համար, մանավանդ լեզու, որը զերծ լինի անորոշությունից և երկիմաստությունից»³⁴: Հնարավոր է նաև հակառակ իրավիճակը, երբ անցյալի միանգամայն հստակ եզրույթները հընթացս ժամանակի դառնան բազմիմաստ և տարտամ: Երկու պարագային էլ մտավոր ճիգը խնդիր ունի կազմակերպելու դարաշրջանների «երկխոսությունը»՝ հաղթահարելով «տեղեկատվական խոչընդոտները»:

Ասվածին հավելենք, որ երկխոսության բացակայության (կամ խաթարման) պարագային արդի պատմագետն իրեն է ենթարկում անցյալը, կամ էլ, ընդհակառակը, անցյալի պատմագիրը՝ ներկան: Ի հետևանս՝ ինչպես

32 Մ. Բլոկ, անդ., էջ 198:

33 Տես *Bull Ch. H.*, The Tradition of Hermes Trismegistus. The Egyptian Priestly Figure as a Teacher of Hellenized Wisdom, Leiden/Boston, Brill, 2018, էջ 27 – 32:

34 Մ. Բլոկ, անդ., էջ 205:

ներկան, այնպես էլ անցյալը կորցնում են իրենց կոնկրետ պատմականությունը:

Մինչդեռ արդյունական երկխոսության պարագային միմյանց հանդիպում են արդի պատմագետը և նրա հեռավոր (կամ մոտիկ) հարակը: Եվ պատմական կարևոր եզրույթներն ու հղացքները նկարագրվում, վերլուծվում, տիպաբանվում, մեկնաբանվում և հասկացվում են դարաշրջանների արժեհամակարգերի հետնախորքում: Մ. Բլոկն այս հոլովույթը նկարագրում է համակեցական կարևորագույն «անունների» իմաստային սահքի վերլուծությանը՝ գյուղ, համայնք, քաղաք, ստրուկ, ճորտ, ֆեոդալիզմ, վերածնունդ, կապիտալիզմ և այլն: Խորքային իմաստով սա մարդկային ժամանակի ըմբոստությունն է «[...] ժամացուցային ժամանակի միակերպության ու խստորոշ տրոհման հանդեպ»³⁵:

Ասվածն իր հերթին վկայում է, որ մարդկային գործոնը պատմության համածիրում լուրջ այլընտրանք չունի, և արտաքին ուժերը «[...] իրենց ամենաբիրտ միջամտության դեպքում անգամ, գործում են միմիայն մարդու և նրա բանականության ուղղորդմամբ»³⁶: Հարկավ, փոքր-ինչ չափազանցված է, բայց և չի խախտում մտավոր ընդհանուր միտումի շրջանակները: Ջի պատմությունն ունի իր առանձնահատուկ գեղագիտությունը, որի առարկան «մարդկային գործողությունների տեսարանն է»՝ գրավիչ երևակայության համար³⁷: Երևակայություն, որը կազմում է պատմության պոեզիայի հենքը, որից նրան, հատկանշե՞նք մեկ անգամ էլ, զրկում էր Արիստոտելը:

Մ. Բլոկի գրույթում պոեզիան համաբերված ու հավասարակշռված է պատմագետի արհեստի հետ: Խոշոր հաշվով «Պաշտպանականը» հենց դրա մասին է: Կոչված է ի մի բերելու պատմություն գիտակարգի նոր ըմբռնումի իմացաբանությունը: Եվ այն լիովին հասել է իր նպատակին: Դրանով է պայմանավորված նրա անանց արժեքը պատմագետների նորանոր սերունդների համար...

Մենք հատկանշեցինք Մ. Բլոկի «սխրանքի» վերոհիշյալ դիտանկյունները, որպեսզի ըստ արժանվույն գնահատենք նրա փոքր, բայց կոթողային աշխատության թարգմանության, ծանոթագրման և ուսումնասիրման հանգամանքներն ու կշռույթը: Հիրավի, Սմբատ Հովհաննիսյանի և Շուշան Մակարյանի արհեստավարժ աշխատանքով հայոց մտավոր միջավայր է ներբերվել պատմական ընկալումների մի ուրույն համալիր: Նրանք կազմակերպել են ֆրանսերեն եզրույթների ու հասկացությունների, հարացույցների ու տեսությունների իմաստային սահքը առ հայոց իմաստաշխարհ: Հրնթացս արվել են բազում ճշգրիտ ձևակերպումներ, որոնք ընդլայնում են պատմության ընկալման շրջանակները: Եվ դա հույժ կարևոր է, եթե նկատի ունենանք, որ մեր «պատմագիտական լեզուն» դեռ ընդհանուր առմամբ կրում է ոչ վաղ անցյալի մարքսիստական կվազի տեսականացման և դրապաշտական կվազի բանականացման կնիքը: Եվ իմաստային լռությունը նրանում անժխտելի է:

Կուզենայինք առանձնացնել Ս. Հովհաննիսյանի ներդրումը: Նրա «Մարկ

35 Մ. Բլոկ, անդ. էջ. 237:

36 Մ. Բլոկ, անդ. էջ. 242:

37 Տես Մ. Բլոկ, անդ. էջ. 52:

Բլոկը և Աննալների դպրոցը. մարդաբանական և համադրական պատմության մեթոդաբանությունը» արժեքավոր ներածականը, բազմաթիվ նուրբ և ի տեղին ծանոթագրությունները (շուրջ 140 էջ) թարգմանական տեքստին հաղորդում են հիպերտեքստի հատկանիշեր, այսինքն՝ ընթերցողի հակառակ հեռանկարում շարունակվելու ու զարգանալու հնարավորություն: Իսկ դա նոր գաղափարների յուրացման և տարածման թերևս ամենաներուսակ ուղին է:

Անտարակույս, «Պաշտպանականը» գերծ չէ թերություններից և բացթողումներից: Նախ, թարգմանելով որևէ եզրույթ՝ հարկ է անպայմանորեն հաշվի առնել հյուրընկալ լեզվի հնարավորությունները: Օրինակ՝ ֆրանսերեն *l'historien*-ը հայերենում (ըստ համատեքստի) պետք է թարգմանել կամ պատմագիր, կամ պատմաբան, կամ էլ պատմագետ: Դրանք արտահայտում են պատմանյութի ընկալման տարբեր մակարդակներ: Կամ՝ հազիվ թե արդարացված է *les origines*-ը ներկայացնել իբրև սկզբնաղբյուրներ. պատմագիտության մեջ դրանք այն նախնական աղբյուրներն են (*les sources historiques*), որոնց հիմամբ գրվում են հետազոտություններ: Ճիշտ կլիներ՝ ծագում կամ սկզբնապատճառ (կամ գուցե, ակունք): Եվ կամ *hiérarchique*-ը թարգմանել ոչ թե հիերարխիական, այլ հիերարքիկ կամ աստիճանակարգային:

Նույնը վերաբերում է աշխատության վերնագրին: Հարկավ, հազիվ թե սխալ կարելի է համարել նրա *apologie*-ի թարգմանությունն իբրև պաշտպանական: Այդուամենայնիվ դա ավելի հարիր կլիներ *la defense*-ի պարագային: Մ. Բլոկը նախընտրել է *apologie*-ն, անտարակույս, մեկնարկելով մշակութային հնագույն ավանդույթներից: Հայտնի է, որ վերջինս օգտագործում էին վաղ քրիստոնեական հայրերը՝ պաշտպանելով իրենց կրոնը հեթանոսներից: Այդ նպատակով նրանք օգտագործում էին անտիկ իմաստասիրության և ճարտասանության, բարոյագիտության և աստվածախոսության, ընկերաբանության և մեկնարկվեստի նվաճումները: Ժանրը լայն տարածում ուներ և կոչվում էր ապոլոգետիկա: Ամենայն հավանականությամբ հենց այսպես էլ ընկալում էին իրենց առաքելությունը հիմնադիր հայրերը՝ պաշտպանելով և հաստատագրելով պատմագիտության նոր սահմանները:

Հավելենք, որ միջնադարյան Հայաստանում ապոլոգետիկան թարգմանվել է ջատագովություն: Եվ այս կապակցությամբ, կարծում ենք, առավել հարիր կլիներ աշխատությունը վերնագրել «Ջատագովություն պատմության կամ պատմագետի արհեստը»:

Սակայն, աստ կանգ առնենք և արձանագրենք. Մ. Բլոկի հիմնարար աշխատության հայերեն թարգմանությունը, հետազոտությունն ու ծանոթագրումը ի գորու են էականորեն փոխել պատմագիտության բովանդակության, իմաստի, հասարակական դերակատարության վերաբերյալ ավանդական շատ պատկերացումներ: Իսկ դա արդի հայ հումանիտար մտքի կարևորագույն խնդիրներից է:

Ալբերտ Ա. Ստեփանյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ, անտիկ և հելլենիստական շրջանի մշակույթի, քաղաքակրթության և պատմության տեսության հիմնախնդիրները: Հիմնական աշխատություններն են՝ Развитие исторической мысли в

древней Армении. Миф, рационализм, историописание, Ер., Изд. АН Арм СССР, 1991, Պլուտինոս, Էննեադներ, Գիրք 5, Հաղագս բանականի, (թարգմանություն, ուսումնասիրություն և մեկնություններ), Եր., 1999, Պատմության կերպավորությունները Մեծ Հայքում. Արտաշիսյան դարաշրջան, Եր., Ս. Խաչենց, 2012, Պատմության հետազիծը. Գործք, գրույթ, իմաստ, Եր., Փրինթինֆո, 2014, Westernization in Hellenistic and Early Medieval Armenia. History and historical texts, Yer., Printinfo, 2018:

Գրականություն

1. **Բյոլկ Մ.**, Պատմության պաշտպանական կամ պատմաբանի արհեստը, ֆրանսերենից թարգմանեց՝ Շուշան Մակարյան, հոդված և ծանոթագրություններ՝ Սմբատ Հովհաննիսյան, Եր., «Խաչենց», «Փրինթինֆո», «Անտարես», 2018:
2. **Braudel F.**, Écrits sur l'histoire, Paris, Flammarion, 1969.
3. **Burke P.**, The French Historical Revolution. The Annales Scholl 1929 – 1989, 1990, Stanford, UP.
4. **Bull Ch.H.**, 2018, The Tradition of Hermes Trismegistus. The Egyptian Priestly Figure as a Teacher of Hellenized Wisdom, Leiden/Boston, Brill.
5. **Carbi S.**, Poetry is More Philosophical than History: Aristotle on Mimêsis and Form, Review of Metaphysics, 64/1, pp. 303 – 336.
6. **Carr E. H.**, 1987, What is history, 2d ed., London, Penguin.
7. **Febvre L.**, À nos lecteurs, à nos amis. Face au vent: manifeste des “Annales” Nouvelles. Annales. Histoire, Sciences Sociales, 1946, I, 1 – 8.
8. **Fustel de Coulanges** – Fustel de Coulanges N.D. 1885, Questions Historiques, Paris, Libraire Hachatte.
9. **Gaddis – Gaddis J.**, , The Landscape of History. How Historians Map the Past, Oxford, 2002, UP.
10. **Հովհաննիսյան Ս.**, Աննալների պատմագիտական դպրոցը. Լյուսյեն Ֆերի և Մարկ Բյոլկի պատմության տեսությունը, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2011, 2 (35), 95 – 118:
11. **Հովհաննիսյան Ս.**, Լյուսյեն Ֆերի կենդանի պատմություն տեսությունը, «Պատմության հարցեր», 2, Եր., «Զանգակ», 2013, 225 – 238:
12. **Marwick A.**, The New Nature of History. Knowledge, Evidence, History, London, 2001, Palgrave.
13. **Ստեփանյան Ա., Մարգարյան Ե.**, Ժամանակի կառույցը Ֆ. Բրոդելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կրթություն» գիտական և մեթոդական հանդես, 2005, 1-2, 33 – 42:
14. **Ստեփանյան Ա.**, Պատմության հետազիծը. Գործք, գրույթ, իմաստ, Եր., «Փրինթինֆո», 2014:
15. **Thomae H.**, The Nomothetic-Ideographic Issue. Some roots and trends, International Journal of Group Tension, 1999, 28/1, 187 – 215.

монографии с акцентом на ее основополагающие идеи и концепции – описание, анализ, синтез, интерпретация и понимание первоисточников с целью установления исторических фактов. Будучи нанизанными на координатах исторического времени и причинности, последние составляют нарративы и тексты, способные охватить глубинные слои исторического прошлого и настоящего. Их точные эквиваленты, найденные авторами перевода, способны расширить пределы современной армянской исторической эпистемологии.

REFERENCES

1. **Blok M.**, Patmutyan pash'tpanakan kam patmabani arhestə, franserenic t'argmanec Sh'ush'an Makaryan, hodvac' yev' c'anot'agrut'yunner' Smbat Hovhannisyan, Ye'r., 2018 **(in Armenian)**.
2. **Hovhannisyan S.**, Annalneri patmagitakan dprocə. Lyusen Fyev'ri yev' Mark Bloki patmut'yan tesut'yunə, "Vem" hamahjkakan handes, 2 (35), 95 – 118 **(in Armenian)**.
3. **Hovhannisyan S.**, Lyusen Fyev'ri kendani patmut'yun tesut'junə, "Patmutyan harcer-2", Ye'r., "Zangak", 225 – 238 **(in Armenian)**.
4. **Stepanyan A.**, Patmut'yan hetagic'ə. Gorc'q, grujt', imast, Ye'r., "P'rint'info", 2014 **(in Armenian)**.
5. **Stepanyan A., Margaryan Ye'r.**, Jamanaki karuycə F. Brodeli patmahayecogh'ut'yan c'irum. "Patmut'yun yev' krt'ut'yun. Gitakan yev' met'odakan handes", 1-2, 33 – 42 **(in Armenian)**.